



**ՀԱՆԳԻՍԵՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԳԻ ԵՎ ՔԵՐՈՋ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹՅՈՒՆ ՎԵՆՓԵՆՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԳՆՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵԳԱՐՁԻ ԱՌԹԻՎ**

Հոկտեմբերի 7-ն է, օրը կիրակի: Արարատյան դաշտի վրա բացվել է աշնանային անուշաբույր և ոսկի առավոտներից մեկը:

Վաղ առավոտյան մայրաքաղաքից, շրջաններից, գյուղերից, ուխտավորների և հավատացյալների բազմությունը ավտոմեքենաներով, հեռիտան դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ուղևորվում:

Այսօր, Նորին Ս. Օծույթյուն Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ, Մայր Տաճարում կմատուցվի հանդիսավոր սուրբ պատարագ և կկատարվի Հայրապետական մաղթանք:

Մայր Տաճարը, վանքի շրջափակը, ամեն կողմ լցված է մարդկային բազմությամբ, մինչ նորանոր ուխտավորական խմբեր, ալիք առ ալիք հասնում են Էջմիածին:

Մայր Տաճարի երկու դասերի մեջ տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի մասնավոր հրավիրատուներով հրավիրված պաշտոնական անձնավորություններ:

Ժամը 11-ն է: Սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Օրվա պատարագին է Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը:

Ժամը 12-ին Վեհաքանոն կազմվում է մեծաշուր և եկեղեցական թափուր: Նորին Ս. Օծույթյուն Վեհափառ Հայրապետը, ավանդական հանդիսությամբ, հայրապետական

ամպհովանու ներքև, զանգերի զվարթալիս ղողանջների տակ, ժողովրդական խանդավառ ու սրտագին մթնոլորտի մեջ, օրհնություն սփռելով Իր շուրջ, Տրդատյան դռնից հանդիսավոր մուտք է գործում Մայր Տաճար: Հայրապետական թափուրի առաջ քալում են կարմրազգեստ շաթիրներ, տարվում են գլխից բարձր պահած հայրապետական քողը, զավազանն ու մեծ, գեղեցկահյուս խաչը:

Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ավագ Սեղանի աշակողմյան դասում Իր Հայրապետական Գահի վրա: Շարունակվում է սուրբ պատարագը: Ամեն կողմ վեհություն, խունկ, աղոթք, խորհուրդ: Տաճարի մեջ ջերմեռանդորեն աղոթում է հայ հավատացյալ ժողովուրդը: Աղոթքի ու խնկի րուպաների հետ երկինք են բարձրանում հազարավոր հայ սրտերից բխած սրտագին մաղթանքներ Մայր Աթոռի հաստատության և հավերժության և Նորին Ս. Օծույթյուն Տ. Տ. Վաղգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքի արևշատության համար:

Քարոզի պահն է: Պատարագի սրբազանը դառնում է դեպի ժողովուրդը և խոսում:

«Նկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Պարերու երգն է այս, փրթած մեր ժողովրդի հողինն և դարերով ոլորակված սկե-
կեղեցին, խնայես երեկ, այնպես այ այսօր,
մեր գոյութիւն տապանն է, մեր պատմու-



ՎԵՆԷՐԱԲԱՐԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԻ ՎԲԱ

րունդն ներքուդ ու հասած մինչև մեր օրե-
րը: Եվ ասիկա անոր համար, որ զոհեալ են
մեր արյունոտ ծիսանքներուն դիմաց: Մենք
մեր ազգային գոյութիւնը կախարհինք մեր

նկեղեցիին: Ավետարանը մագաղաթ ու գիր ըլլալն առաջ, հայ սիրտ է հայ կուրծքերու տակ, մեր նահատակներուն և մեր սուրբերուն մարմինները տաղավարող քանդակներ, լիսած մեր նրկրի ալքերն:

Հայ նկեղեցին հայ ցեղին խղճմտանքն է: Եվ եթե Հայ նկեղեցին տկարացած է այսօր որոշ չափով, պատճառն այն է, որ ան տված է ինքզինքը ամբողջ իր ժողովրդին: Եվ այդ զոհողության, այդ իմաստության շնորհիվ է, որ մենք եկած, հասած ենք այս օրերու սեմին, և լծած մեր սայլերը, կշարունակենք մեր պատմությունը ուրիշ ժողովուրդներու հետ համընթաց:

Մեր ազնվական ու զոհաբերվող հայրապետներն մին է Նորին Ս. Օծուխուն Տ. Տ. Վաղգեն Ա մեր սիրելի Հայրապետը, իրեն շառավիղը Լուսավորչին, շառավիղը բոլոր անոնց, որոնք շինեցին մեր նկեղեցին, որոնք կրցան նրգել դարերու երգը՝ «Նկայք, շինեսցուք սուրբ զխորանն լուսու»:

Հոս, հանուն մեր նկեղեցիին, մեր խորունկ զոհունակությունն ու շնորհակալությունը կհայտնենք մեր Հայրենի կառավարության, Սովետական մեր կառավարության, որ մեր փափազին համեմատ և ավելիով փութին ունեցավ մեր Սրբություն Սրբոցը, մեր ճարտարապետական գեղեցիկ և լավագույն կառույցը, մեր հոգիին տուն տաղավար էջմիածինը այսպես նկարադարձելու և գեղեցկացնելու: Արտասահմանի և Հայրենիքի ամբողջ հայությունը երբեք պիտի չկրնա մոռնալ այս բարիքը, որ միայն՝ պետություն մը կրնար ընել իր միջոցներով: Իսկ այսքան սքանչելի կերպով սկզբնավորված գործը գտած է շարունակողը հանձին մեր սիրելի Հայրապետին: Մենք իր հետն ենք: Հայ ժողովուրդը իր հետն է, և ամենն ավելին և ամենն բարձրը՝ Հայրենի կառավարությունն իր հետն է:

Նորին Վեհափառությունը երբ ինն ամիսներ առաջ արտասահման եկավ, հոն բերելու նախ Լուսավորչի Աթոռին հմայքը, հետո Հայրենիքին կարտը, և մանավանդ սիրուն համար հոգիներուն մեջ իր երիտասարդ հոգիին կազդույրը, սիրվեցավ և հարգվեցավ բոլորեն, բոլորը խանդավառվեցան

իրմով հանուն Հայրենիքի, հանուն էջմիածնի գաղափարին, գաղափարների, որոնք պատմության ընթացքին եթե ներքեմն իրարմե բաժնված են, սակայն միշտ զիրար լրացուցած են սերունդներու և մարդերու հոգիին մեջ: Եվ այդ գաղափարով Վեհափառ Հայրապետը եղավ ոչ միայն Հայրենիքի, ոչ միայն էջմիածնի, այլ մեր ամբողջ ժողովրդի դարավոր խորհրդին մարմնացումը: Նույնիսկ անոնք, որոնք տարբեր չափերով ու տարբեր կշիռներով ուղեցին կշռել իր առաքելությունը, անոնք անգամ խոնարհեցան Նորին Վեհափառության բազմի դեմքին, լուսավոր անձնավորության և իր անձնի բխած պարզության առջև:

Վեհափառ Հայրապետի գահակալության և օծման տարեդարձն է այսօր: Իր պաշտոնի սկզբնավորության, երբ իր տաաների ա-միսները կկազմեն այսպես գեղեցիկ պսակ մը իր դեմքին շուրջ, ես կմաղթեմ, որ իրարու հաջորդող տարիները ավելի ու ավելի փայլեցնեն իր դեմքը, տարիները ավելի արդյունավոր ըլլան, ավելի մեծ և գեղեցիկ կերպով գեղեցկացնեն իր դեմքը և բարգավաճեն իր գործը, ի փառս Աստուծո և Հայ նկեղեցիին և ի վախճումն բոլոր անոնց, որոնք իրական և մարտի ոգիով գիտեն նայիլ մեր նկեղեցիին և մեր Հայրենիքին վերելքին ու ծաղկմանը:

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծուխուն Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Դեպի Վեհարան իր վերադարձի ճանապարհի վրա, Նորին Ս. Օծուխունը ջերմորեն ու խանդավառությամբ դիմավորվում էր թափորի անցքի կողմերում հավաքված խումբ բազմության կողմից: Մինչ թափորը ուղղվում էր դեպի Վեհարան, ժողովրդից շատերը բացազանջում էին. «Կեցցե՛ Վեհափառ Հայրապետը, փառավոր մնա միշտ Ս. էջմիածինը»: Վեհարանի մեծ դարբասի առաջ կանգնած, Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, խորապես հուզված այս համաժողովրդական, անկեղծ հարգանքի և սիրտ արտահայտություններից:

